

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԻ ՈՐՈՇՈՒՄ.

Մի մեծ հրապարակային ժողովում, գումար-
ած Սօֆիայում բուլղարական սօցիալ-դեմոկրատ
բանեորական կուսակցութեան կօմիտէի նախա-
ձեռնութեամբ, քննարկել է մի Որոշում, որն այ-
նուհետև հաղորդել է եւրօպական մամուլին: Այդ
Որոշումն ընթերցողը կը գտնէ «Հնչակի» ներ-
կայ համարում: Ապաւած մի լայն ու բանիմաց
ոգով, ամփոփելով իր մէջ օսմանեան լծի տակ
հեծող բոլոր ժողովուրդների ազատագրական ձգտու-
ման պահանջը, նա մասնաւորապէս կանգ է առ-
նում Մակեդոնիայի խնդրի վրայ, այդ երկիրը դար-
ձած լինելով կուսակցութեան Բալգարիայի, Սերբիա-
յի և Յունաստանի մէջ: Պարզ բան է, որ դե-
մոկրատական ոգով ներշնչւած, Ժողովը բացա-
սում է Մակեդոնիայի ամեն կերպի միացում այդ
երեք տէրութիւններից որ և է մէկին, կամ երե-
քին էլ միաժամանակ՝ կտոր-կտոր: Ժողովն ամեն
մարդկային ու ազգային իրաւունքների ջատագով
հանդիսանալով, պահանջում է, որ Մակեդո-
նիան պատկանէ Մակեդոնացիներին, որ այդ եր-
կիրն ունենայ իր քաղաքական ինքնավարութիւնը:
Եւ սակայն այդ բոլորը չէ: Եթէ Ժողովը բաւա-
կանանար միմիայն այդպիսի մէկ ընդհանուր բաղ-
ձանքով, նրա Որոշումը չէր կարող ունենալ այն
կարեւորութիւնը, որին հասաւ նա: Յայտարարելով
հանդերձ Մակեդոնիայի ինքնավարութեան ան-
հրաժեշտութիւնը, մի կողմից այդ երկրի հան-
գըստութեան, բարօրութեան ու առաջադիմու-
թեան տեսակէտից և միւս կողմից երեք փոքրիկ
տէրութիւնների սպառնական ու վտանգաւոր — թէ
իրանց և թէ Մակեդոնիայի համար — յաւակնու-
թիւններին վերջ տալու տեսակէտից, Ժողովը ո-
րոշապէս գծադրում է այն սկզբունքը, որը պէտք
է ծառայէ իբրև հիմք Մակեդոնիայի ինքնավա-
րութեան: Որն է այդ սկզբունքը. Իւրաքանչիւր
գաւառ իրաւունք ունի տեղական գործերի հա-
մար իբրև պաշտօնական լեզու գործածել իր բը-
նակիչների մեծամասնութեան լեզուն, իսկ երկրի
ընդհանուր գործերի համար կրնաւորուեն մի քա-
նի պաշտօնական լեզու, ինչպէս Շվեյցարիայում:
Այդ սկզբունքը, նոյնքան դեմոկրատական, որքան

և գործնական ու համաձայն ամեն-մէկ ազգի ա-
մենահիմնական, այն է՝ գոյութեան իրաւունքի —
միանգամայն նաև լուծում է մի շատ բարդ խն-
դիր, որ թէ Մակեդոնիայի և թէ Հայաստանի
նկատմամբ ի չարն էր գործ դրւում եւրօպական
հակազատական մամուլի և նոյն իսկ զիպլօմատա-
կան մարմինների կողմից: Նրանք ասում էին. «Են-
թաղրենք, որ ինքնավարութիւն տրեցաւ այդ եր-
կիրներին, բայց իրականութիւն է, որ նրանց ազ-
գաբնակութիւնը խառն է, որ նրանց բնակիչները
պատկանում են այլ և այլ ազգերի: Արդ, ո՞րն է այն
սիստէմը, որով նրանք կը կառավարւեն, որպէսզի
առաջնութիւն տրւած չը լինի ոմանց և ապա
անկարելի չը դարձնէ երկրի մէջ ինքնավարութեան
հաստատումը: Հայերը Հայաստանում խառն են
Թիւրքերի և Քիւրդերի հետ, Բալգարները Մա-
կեդոնիայում խառն են Սերբերի և Յոյների հետ —
որն է դրանցից, որ պէտք է իշխող տարրը լինի:»
Եւ այդպիսի առարկութիւններով հայկական ու
մակեդոնական խնդիրները խափանողներն ու փա-
կողները կարծում էին չինական պարիսպներ բար-
ձրացրած լինել այդ խնդիրների լուծման տու-
ջը: Իր ժամանակին մենք պատասխանել ենք այդ
ըստ երևոյթին անյուծելի, բայց իսկապէս կոյր ա-
ռարկութիւններին: Մեր պատասխանը եղել է նոյն
մտքով, ինչ որ և այսօր գտնում ենք վերոյիշած
Ժողովի Որոշման մէջ. ամեն-մէկ ազգ իր լեզուն,
գաւառում՝ մեծամասնութեան իրաւունքով, ընդ-
հանուր երկրում՝ իւրաքանչիւրն էլ իր լեզուն:
Եւ դրան մենք աւելացրել ենք նաև վարչական
կառավարութեան սկզբունքը. ամեն-մի գաւառ կա-
ռավարւում է, իր տեղական գործերում, իր ըն-
տրւած անդական մի մարմնով, և ամբողջ եր-
կիրն էլ կառավարւում է, ընդհանուր գործե-
րում, ընդհանուր կողմից ընտրւած մի մարմնով:
Այդ երկու դրութիւններով — լեզու և կառավար-
ւածման ձևի — տապալում ու չքանում են վե-
րոյիշած չարամիտ կամ կոյր առարկութիւնները,
մաքրւում ու հարթւում է խնդրի լուծման հո-
ղը և բոլորովին որոշում գորգեան հանգոյցը կը-
տրելու ընական, գործնական ու արդար միջոցը:
Այստեղ ի գէպ է ասելու, որ Արևելեան խն-
դրի լուծման պարզ ուղին ցոյց տալու պատիւն
ընկնում է իրանց՝ Արևելյանների վրայ, մինչդեռ

այդ ուղին անդիտանալու և այդ խնդրի լուծման առաջ անյաղթելի արգելքներ ստեղծելու ամօթը և արևսասական արգելքների պատճառով առաջացած բոլոր հետևանքներն ամբողջովին ընկնում են եւրօպական ամբողջ զիպլոմատականութեան վրայ: Եթէ վերջինս ունէր մազաչափ արդարասիրութիւն. եթէ նա զիտակցաբար, իր նիւթական շահերի համար չէր, որ զոհաբերեց Մեծ Մարդասպանի կուռքին ամբողջ ազգերի արիւնը. եթէ, վերջապէս, Թիւրքիայի նորանոր կտոր-կտոր հողեր ապագայում իւրացնելու տենչով չէր, որ մեծ տէրութիւններն իրարու դէմ ստոր ինտրիգների ուղին ընտրեցին — տանջուող Արևելքիների միտքն ու խօսքը, որ դուրս էին եկնում արեան ծովից ու կռւի դաշտից, նրանք կարող էր լինէին լսելու, կարող էր լինէին գործադրելու, կարող էր լինէին վերջ տալու սուլթանական մարդասպանութեան ու վայրենութեան թագաւորութեան: Սակայն չը խառնենք այդ վէրքերն այսօր այլ մըտքով, եթէ ոչ միայն այն նպատակով, որ շարունակական կերպով կրկնած ու պնդած լինենք այն, ինչ «Հնչակի» գոյութեան սկզբից մինչև այսօր ազդակել ենք. — եւրօպական զիպլոմատիան, տէրութիւններն իրանց շահերի ու ինտրիգների գերի են, և Արևելեան ազգերն իրանք պէտք է ջանան ամեն ճիգ թափել իրանք իրանց օգնելու, իրանք իրանց ազատելու: Վրա հակառակ խօսող հայերը կամ տխմար ազգակործաններ են և կամ խաբւած կոյրեր: Անձնատուր չը լինենք ընդհանուր վհատութեան, անտարբերութեան և առհասարակ բէկեցիայի ամեն բարոյական ապականութեան, որ կարող է հայերիս հասցնել մինչև բարոյական անկում, բարոյական մահ: Մարդասպանը մեզ խորունկ վէրք հասցրեց, բայց եթէ մենք ինքներս յուսահատուենք, բարոյապէս մահացնելով մեզ, մենք դործած կը լինենք անձնասպանութիւն: Այսօր հայ հասարակութիւնը, վհատած թշնամու հարւածներից և միամտաբար ականջ դնելով չարամիտների ու տխմարների, վատերի ու հացկատակների հանած աղմուկին ու պոռոցին յեղափոխական Վաղափարի դէմ, իսկապէս վտանգում է հայութեան դատն ու ապագան, իսկապէս քաջալերում է անձնասպանութիւն գործելու ոճրի մէջ: Թող վհատաւածները, անկեղծ սքտերը, ջանան վերակենդանացնել իրանց ոգին: Յեղափոխական Վաղափարն անյաղթելի է և միակ ուղին է փրկութեան: Եւ քանի որ հայոց մէջ կը գտնեն նոյն իսկ հարիւր, նոյն իսկ տասը, նոյն իսկ մի միտք ու սիրտ, որ կրում են այդ Վաղափարը հայկական երկունքի մէջ գտնուող ներկայ իրականութեան միջոցին — հայութեան փրկութեան դատը չի մեռնիլ: Թող հաւ ազաւաններն իջ-

նեն լէշերի վրայ. կենդանի մարդը, կենդանի միտքն ու սիրտը միշտ, ամեն պարագայում զիտէ ձգտել դէպի կեանքը, դէպի ապագան, դէպի փրկութիւն... Մենակ լինենք իսկ և կուրացած ընդհանրութիւնն էլ մեր դէմ, մենք չենք ձգիլ մեր ընտրած ուղին, ոչինչ չի խլացնիլ մեր խօսքը, ոչինչ չի մահացնիլ մեր Վաղափարը:

Վառնանք Ժողովի Որոշման: Եւ մի կէտում նա դիմում է անում եւրօպական հասարակաց կարծիքին և «մանաւանդ» եւրօպական դէմօկրատական կուսակցութիւններին, որպէսզի սրանք պահանջեն քաղաքական ինքնավարութիւն Մակեդոնիայի և Թիւրքիայի միւս գաւառների համար: Այնքան է, որ մասնաւորապէս Եւրօպայի դէմօկրատական կուսակցութիւնների վրայ ընկնում է բարոյական պարտականութիւն առաջ մղելու նոյն իրանց սկզբունքների իրագործման դատը նաև Թիւրքական գաւառների նկատմամբ: Բայց մենք կարծում ենք, որ այդպիսի մի գործունէութիւն շոշափելի աջողութեան և գէթ մինչև յայտնի աստիճան իրական արդիւնքներ առաջացնելու վիճակում գտնուելու համար՝ այդ կուսակցութիւնները պէտք է ունենան երկու բան: Մէկ այն, որ արևելեան գործող կոմիտէները պէտք է իրանց սեփական գործունէութեամբ ստեղծեն այդ կուսակցութիւնների համար այն հողը, որը խնդրին կը տայ այժմէնութիւն (actualité) և այդպիսով եւրօպական համակրող տարրերի մէջ կառաջացնէ անմիջական իրարանցում: Ի դիմաց այն հակառակութեան, որ ունեն եւրօպական տէրութիւնները դէպի փոքրիկ ազգերի դատը. ի դիմաց այն ջանքերի, որ անում է այդ տէրութիւնների համաձայնութիւնը՝ խլացնելու Արևելեան խնդիրը, — Արևելքիների կողմից առանց գործի արւած պահանջներն ու նրանց կրած աղէտները չեն կարող եւրօպական դէմօկրատական կուսակցութիւններին տալ հարկաւոր ոյժն ու ազդեցութիւնը Եւրօպայի հրապարակում շարունակ առաջ մղելու և ջատագովելու Արևելեան ազգերի դատը: Մեր երկրորդ նկատողութիւնն էլ այն է, որ յամենայն դէպս անհրաժեշտ է, որ Արևելեան կոմիտէներն ուղղաձի յարաբերութիւն մէջ մտնեն այդ կուսակցութիւնների հետ եւրօպական երկիրներում, և այդպիսով ամեն տեղ ստեղծեն այդ կուսակցութիւնների համատիպ, միաժամանակեայ և ընդհանուր մի գործակցութիւն յօգուտ Արևելեան ազգերի դատի: Նախապէս այդ երկու կէտերն են, որ պէտք է վերածել գործնականի, որպէսզի եւրօպական դէմօկրատական կուսակցութիւնների ջանքերը կարող լինեն առաջացնել որ և է զգալի արդիւնք:

Սակայն այդ բոլորից էլ առաջ արևելեան կոմիտէների վրայ ընկնում է մի պարտականութիւն,

որ ամենահիմնականն է, մի պարտականութիւն, որ արդէն կազմում է Որոշման էական բաժինը: Ժողովը կոչ է անում բաղկանեան ժողովուրդներին ու առաջադիմական կուսակցութիւններին համաձայնութիւն կայացնել միեւնոյն ձգտման վրայ, այն է ինքնավարութեան պահանջը Մակեդոնիայի, որպէս և թիւրքական միւս գաւառների համար: Այդ զաղափարը, որ ահա տասը տարիից աւելի է, կազմում է Հնչակեան Կարգի էական կէտերից մէկը, որպէս ճշւած ազգերի համաձայնութեան անհրաժեշտութիւն թէ նպատակի և թէ համագործակցութեան նկատմամբ, այսօր մենք հրձանքով ենք լսում բոլորական կոմիտէի կողմից: Եւ մենք չենք վարանում ասելու, որ, այո՛, աջողութեան երաշխաւորութիւնը կայանում է այդպիսի համաձայնութեան ու համագործակցութեան մէջ: Յաւով պէտք է ասենք, որ մինչև հիմա մեր կողմից այդ նպատակով արւած բոլոր ջանքերի հակառակ՝ այդպիսի մէկ առաջնակարգ պայման անկարելի եղաւ լիովին իրականացնել: Հետեւաբար, սրտանց մաղթում ենք, որ ներկայ դառն պարագաներում, այդ միտքը կատարեալ իրադրո՞ծում ստանայ, և հրաւիրում ենք Սօֆիայի Կոմիտէին այդ նպատակով նախաձեռնութիւն ստանձնել իր վրայ բանակցելու ճշւած ազգերի յիդալիսական կուսակցութիւնների հետ:

Առաջադրել մի բարձր միտք դեղեցիկ բան է, բայց ջանալ այն իրականացնել և ձգտել դէպի նրա յաղթութիւնը, թէկուզ ամենածանր դնով, պատմական մեծ դործ է:

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԻՑ.

15 ԴԵԿ. 97.

Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչութիւնը հետեւեալ կը նւազի իր թարմ, աշխատաւոր ոյժերէն: Գաղթականութիւնը ստացած է հայ ժողովուրդի մէջ մէկ անդամադրելի հոսանք, որը անվերջ կը դիմէ երկրէն դուրս՝ դէպի օտարութիւն: Գաղթականական շարքերը կը լրացնեն ժողովուրդի ամեն գասակարգերէն — հայ մշակը, արհեստաւորը, քաղաքացին, խումբ-խումբ, փոքրիկ երեխաներով ու իրենց մայրերով, յուսահատ, լքելով իրենց արգասաբեր հողերը, պարտեղները ստացածքը: Ոչ ձմեռայն սաստիկութիւնը, ոչ ճանապարհային տաժանելի ներութիւնները և ոչ թշուառութիւնը կամ անօթութիւնը անկարող են եղած արգելք դառնալ և կասեցնել նոցա կարաւանների ընթացքը: Երկրի տնտեսական տըխուր վիճակը, կառավարական գաղանթութիւնները, բռնութիւն, անվերջ հալածանք — ահա այս բոլորի հանդէպ օտարութեան ձայնը բաղցր կը հնչէ նոցա ականջին և նոքա կը հաշտուեն պանդխտութեան ամեն տեսակ զրկանքի ու անձկութիւնների հետ: Միայն վերջին մի բանի ամիսների մէջ գաղթող ընտանիքների թիւը կը հասնի հազարների:

Թիւրքական կառավարութիւնը, միշտ աւերող, բանդող, անհաշտ թշնամի դէպի երկրի տնտեսական առաջադիմութիւնը, դէպի ժողովրդի զարգացումը, դարձել է բոլորովին անդգայ, կոյր այն վտանգի տուօ, որը, գաղթականութեան աղետալի հետեանքի շնորհով, այսօր կը սպառնայ մեր երկրին՝ ցամաքեցնելով այնտեղ կեանքը, կենդանութիւնը: Ընդհակառակը նա շատ գոհ է, որ հայերը, այդ անհանգիստ տարրը, կը հեռանան իր.թի տակէն և այլ ևս չեն վրդովեր իր հանգիստը: Օգտւելով հանգամանքներէն, սուլթանի կառավարութիւնը, ոչ միայն խարբերդի, այլ և շրջակայ հայաշատ գաւառների մէջ, երեւան կը բերէ նորանոր օրէնքներ, կամայական հրամաններ՝ աւելի ուժգին զարկ տալու գաղթային հոսանքին և ատոր հետ միասին գըրաւելու գաղթողների հողը, ստացւածքը և բոլոր իրաւունքները: Իսկ անբարոյական պաշտօնէութիւնը ու ոստիկանները թէզքէրէի և այլ և այլ պատրասկներով մի նոր ասպարէզ են բացեր կեղեքելու, հարստահարելու համար հայ ժողովուրդը՝ թէ բաղաբների մէջ և թէ ճանապարհների վրայ:

Մի ժամանակ կառավարութիւնը զբաղուած էր բարենորոգումների խնդրով և ամեն կողմ կը շուայուէին սուլթանական խոստումները: Կուսակալը և իր արբանեակները կը հաւատացնէին ժողովուրդին, թէ ուղլթանի բացարձակ ցանկութիւնն է վերահաստատել խաղաղութիւնը երկրի մէջ, ապահովել բրիտանեանների կեանքը, պատիւը, ստացւածքը և հոգ տանել խարբերութիւնների կանոնաւորման: Սակայն այս բոլորը թիւրքական խաբեբայութիւններէն, շատ անգամ կրկնուած, երբ նա այդ հարկի մէջ է գտնուել, զղելի ստախոսութիւններ փայլուն ֆրագների մէջ ծրարած, որոնց ծառայեցուցել է որպէս դիմակ իր տգեղ արարքները, ոճիրները թագցնելու համար: Եւ կարծելով, որ իր մօրթը փրկել է այլ ևս, ապահովել է հիւանդ գոյութիւնը մի առժամանակ, այժմ նա բացարձակ կերպով կը գործադրէ իր ցանկութիւնները՝ հայերը կեղեքելու, ըստրկացնելու և ուժասպառ անելու համար թէ տնտեսապէս և թէ բարոյապէս: Բարենորոգումների հարցը անտես առնուած է բոլորովին և անբարոյական, կաշառակեր ու տգէտ պաշտօնեանների կամայականութիւնն է, որը կը գործէ մեր երկրի մէջ առանց սահմանի և առանց երկիւղի:

Թշուառութիւնը աննկարագրելի է նահանգիս հայաշատ բաղամիւ գիւղերի մէջ: Մերկ, անօթի, թալանուած իր բոլոր տնային ու երկրագործական կահ-կարասիներէն, կողոպտուած առօրեայ հացէն ու ապրուստի անհրաժեշտ միջոցներէն, խարբերդցի գիւղացին կը դեգերի անստուգութեան մէջ իր վիճակի և ապագայի նկատմամբ: Առանց սերմի առանց վարուցանի՝ պարագաների, նա ստիպուած է ճորտը դառնալ թիւրք ու քիւրդ աղային, ծառայել, անվերջ աշխատել՝ երաշխաւորելու համար իր և իր ընտանիքի գոյութիւնը: Մօտ 15 հայկական գիւղեր, քիւրդական գաւառների սահմանակից, սովամահ լինելու վտանգին են ենթարկուած և իրենց վիճակը խիստ արգասատելի է: Իսկ հարկահաւաքութիւնը, չը նայած այդ դժոխային կացութեան, կը գործադրուի գիւղերի մէջ միեւնոյն գաղանային եղանակներով, որը յատուկ է միայն թիւրք զարթիւնների ու պաշտօնեանների: Նոքա կը գտն լրացնել հայերի թըրւառութեան բաժակը: Հնչիւն դրամ չը գտնելով, նոքա կը վաճառեն հայ երկրագործի գոյքերը, անկողինը և վեր-

քին օրապահիկը, իսկ մի կողմ կը թողնենք այն չկտի ա-
րարքները, որոնք սովորական են թիւրք ոստիկանների և
թաշախտարների համար: Այս բոլորը առաջացուցած են
նաև կրօնափոխութեան բազմաթիւ դեպքեր, որոնք կը
կրկնուեն ամեն օր և կը գտնեն բացարձակ բաշխելու-
թիւն թէ իսլամ ամբոխի և թէ պաշտօնէութեան կողմէ:

Ամսիս սկիզբները տեղս հասան անգլիացի մի բա-
նի ճանապարհորդներ, որոնք կայցելին կոտորած գա-
ւառները: Սրբա կը ջանան նիւթական օգնութիւն մա-
տակարարել չքաւոր ընտանիքներին. նաև մտադրութիւն
ունին թէ գիւղերի և թէ բաղաբին մէջ հաստատել որ-
բանոցներ և աշխատանքի միջոցներ գտնել այրիներին
ու ծերերին: Առ այժմ պիտի ձեռնարկեն շուտով մէկ
որբանոցի շինութիւնը, որտեղ պէտք է պատասպարուն
մօտաւորապէս 400 որբ երեխաներ: Այդպիսի մի շէն-
քի համար պիտի ծախսեն մօտ 2000 ոսկի: Հայ հա-
սարակութիւնը առհասարակ համակրութիւն ցոյց կը տա,
այդ անախագիտներին ու նոցա ձեռնարկութեանը:

ՀՐԴԵՀ.

ՆԱՄԱԿ ԲԱՂԴԱԴԻՑ

16 ԴԵԿ. 1897.

Մի ժամանակէ իվեր հանգարտած արաբական ցե-
ղերը գարձեալ սկսան խլրտիլ: Այս օրեր ծանրակշիռ
և ուշագրաւ մի շարժում տեղի ունեցաւ Պարսից Ծո-
ցի արևմտեան եզերքի արաբ աշիրէթների մէջ: Կը-
տիֆի հզօր ցեղապետը՝ Ճասըմը Սանի, որ չորս տարի
առաջ յարձակելով տեղի օսմանեան զօրանոցի վրայ՝ ամ-
բողջովին սրէ անցուցած էր մէկ վաշտ պահակազօրքը
և ապա կայսերական ներման արժանանալով օսմանիէի
չքանչանով էր վարձատրւած իր այդ սխրագործութեան
համար, վերջերս կրկին վայրանալով տեղական կառա-
վարութեան կեղծքողմներին դէմ, վերջնականապէս նա
խընտրած է Ալբիօնի գերիշխանութիւնը մահմետական
խալիֆայի լծէն և անգլիական մարտանաւերի միջամտու-
թիւնը խնդրած: Հնդկական ջրերէն անմիջապէս հա-
սած են չորս անգլիական յաճախորդներ, որոնք, կրտսի
թէ, իրենց հետ բերած են նաև մեծ բանակութեամբ
զէնք ու ռազմավորութիւնը և ցրուած դժգոհ ցեղերին: Այ-
ժըմ մօտ 40,000 արաբական ապստամբներ, զինուած ա-
րագահիգ զէնքերով, կը պատրաստուին միահամուռ մի
յարձակում գործելու:

Սթամպուլի մեծագործ փոստիշահը, իր համախա-
մական երազներով ցնորւած, գաղտնի պատիրակների
միջոցով Աֆխանիստանի լեռնականները Հնդկոստանի դէմ
յուզած պահուն չէր մտաբերած անգլիական պաղարին:
Վրէժխնդրութիւնը, որ կարող էր յուշիկ մի թել քա-
շելով խալիֆայական կարկասուն պատմութեանն՝ խո-
շոր մի ծակ բանալ նորա մարմնի վրայ:

Մի քանի օր յետոյ Բաղդադէն կը մեկնին ութ
զօրապետներ, նոյնպէս և շրջապաններէն պիտի ուղարկ-
ուին երեք գունդ ապստամբութիւնը զսպելու համար:
Պատերազմի ծախսերի համար օսմ. պանդի միջոցով Պօլ-
սէն հանուած է 10,000 ոսկի, նոյնչափ գումար ալ կրս-
պատուի: Արմաններ միաժամանակ, թէ երեք զրահա-
ւորներ ալ ճանապարհ ընկած են փութով, որոնք յու-
սալի է, եթէ ճանքան չը մոլորին, մարգարէի օգնութեամբ
մի քանի ամիսէն Պօլսէն կը հասնին Պարսից ծոցը՝ նո-
րոգութեան կարօտ վիճակի մէջ: Սոյն կարեւոր դէպքի

մասին երբ ստանանք մանրամասնութիւններ, անյապաղ
կը տեղեկագրենք ձեզ:

ՈՐՈՇՈՒՄ.

Բաղդադիայից ստացել ենք հետևեալ վկայա-
թուղթը.—

Սօցիալիստ - Դեմոկրատ բանւորական կուսակցու-
թեան տեղական կոմիտէի կողմից, 1897 դեկտեմբե-
րի 21-ին, „Դոբրօկի Զիմնիկ“ում գումարած հա-
սարակային մի մեծ ժողովում, Սօֆիայի քաղաքացիները
(citoyen)՝ լսելուց յետոյ Դր. Կ. Ռակովսկի, Ն. Հաւ-
լիօֆի և ուրիշ ատենախօսների միաձայնութեամբ բւե-
արկել են հետևեալ որոշումը.

Նկատելով, որ ներկայ քաղաքական լիճիմը թիւր-
քիայում, որի բնաւորոշ յատկութիւններն են ընդ-
հանուր հալածանքներ և երկու սեռից տառնեակ հա-
զարաւոր անմեղ քաղաքացիների խոլխոլում, երէկ Հա-
յաստանում և Կրէտէյում, այսօր, հանդերձ միևնոյն
արինայի մանրամասնութիւններով, Մակեդօնիայում, մի
կողմից ոչնչացնում է տնտեսական և քաղաքական ամ-
բողջ առաջադիմութիւնը, որին իրաւունք ունեն թիւր-
քիայի լծի տակ հեծող բոլոր ժողովուրդները և միւս
կողմից ներկայացնում է շարունակական մի վտանգ մի-
ջազգային խաղաղութեան համար.

Նկատելով նաև, որ Եւրոպան իրաւունք ստացաւ՝
ճանաչած միջազգային և վաւերական դաշնագրու-
թիւններով՝ զիպլոմատական եղանակով կարգադրելու
թիւրքիայի ներքին գործերը.

Նկատելով վերջապէս, որ այժմեան ներքին կատաղի
կռիւնները՝ մղւած բալկանեան ժողովուրդների կողմից Մակե-
դօնիայի ստացման համար, կռիւներ քաջալերւած կա-
ռավարութիւններից և գրգռւած այդ երկրների շօվինիստ
լրագրերից, իսպառ տկարացնում են նրանց և յանձնում
հասարակաց թշնամու՝ ռուսական, աւստրիական և կամ
ուրիշ կառավարութիւնների ձեռքը, և ապա, որ բացի
դա, այդ կռիւները վտանգում են ոչ միայն բալկանեան
երկրների քաղաքական անկախութիւնը, այլ և խիստ վը-
նասակար են նոյն իրա՝ Մակեդօնիայի՝ համար, պա-
ռակտելով նրա ոյժերը, նրա միութիւնը և նրան ան-
պաշտպան յանձնելով Խուլթանի քմահաճոյքներին.

Սօֆիայի քաղաքացիները

1. Բողոքում են ընդդէմ ամբողջ թիւրքական
կայսրութեան ներկայ լիճիմի և մասնաւորապէս այն գա-
ղանութիւնների, որոնք կատարում են Մակեդօնիայում:

2. Մոչ են անում Եւրոպայի հասարակութեան կար-
ծիքին և մանաւանդ նրա դեմոկրատական կուսակցութիւն-
ներին՝ պահանջելու քաղաքական ինքնավարութիւն Մա-
կեդօնիայի, որպէս և թիւրքական միւս գաւառների համար:

3. Կատապարտում են խիստ կերպով այն ոճիր-
ները և այն փոխադարձ հալածանքները, որոնք գործա-
դրւում են Մակեդօնիայում զանազան պրօպագանդանե-
րով, ինչպէս բուլղարական, սերբական, յոյն կամ ռու-
սական:

4. Մոչ են անում բալկանեան ժողովուրդներին և
բալկանեան թերակղզու առաջադիմական կուսակցութիւն-
ներին՝ միաբանելու փոխադարձ կերպով միևնոյն պա-
հանջի, այն է՝ ինչպէս Մակեդօնիայի, նոյնպէս և թիւր-
քական միւս գաւառների՝ ինքնավարութեան մասին և
իսպառ հրաժարելու բոլոր յետագայ յաւակնութիւննե-

րից Մակեդոնիայի նկատմամբ: Այդ ինքնավարութիւնը պէտք է տարածուէ մակեդոնական նահանգների և կանտոնների (գաւառականների) վրայ՝ հանդերձ ընտրողական իրաւունքով ընտրելու իբրեւ պաշտօնական լեզու տեղական գործերի համար՝ կանտոնների բնակիչների մեծամասնութեան լեզուն և ընդունելու մի քանի պաշտօնական լեզու երկրի ընդհանուր գործերի համար — ինչպէս է Շւեյցարիայում, որը հետեւաբար պէտք է ընծայէ բոլոր ազգային խմբերին, որքան փոքր էլ նրանք լինեն, կարելիութիւն՝ զարգացնելու իրանց ազգայնութիւնը: Սոյնօրինակ մի համերաշխութիւն՝ մակեդոնական հարցում՝ վերջ կը դնէ բալկանեան երկրների ներքին կռիւներին և կը տոեղծէ նրանց համար անհրաժեշտ պայմաններն ընդհանուր գործողութեան համար՝ ընդգէմ թիւրքական կառավարութեան մի կողմից և արտաքին գիպլոմատական ինտրիգներին՝ միւս կողմից, և դա կը լինի մի մեծ օգտակարութիւն իրանց համար և մի մեծ վաստակ եւրոպական խաղաղութեան համար:

5. Արտօնուում է վարչութեանը տարածելու սոյն որոշումը բալկանեան և եւրոպական լրագրութիւնների մէջ:

Վարչութիւն.

Նախագահ — Անտօն Խվանով.

Սօֆիա 21 դեկ. 1897

(2 յունւարի 1898)

Տ. Բանկով.

Անգամներ. Ն. Գեօրգիւնով.

Ն. Գլավինով.

Քարտուղար — Ա. Վասիլիւնով.

ՏԱՐՏԻՏԻՑ—ԱՃՊԱՐԱՐ.

Այդ դաւաճանները, մատնիչները և հայրենաւորի ու յեղափոխականի դիմակ հագած շառլատաններն իրանց սուրբ դատը պաշտպանելու համար վերջապէս գտել են իրանց արժանաւոր փաստաբանին: Եւ ո՞վ կարող էր լինել այդ փաստաբանը, եթէ ոչ Վ. Պօլսի շնորով լի փողոցներում պտտած և սուլթանական՝ մայրաքաղաքի գաւառականներ ու ինտրիգան հայ շրջաններում սնւած ու ապրած հոստի մէկը: Դա Մ. Չերազն է, որ չամաչեց ամբողջ տասնեակ տարիներ հրապարակապէս խաբել աշխարհին, թէ ինքը Խրիմեանի հետ պատգամաւոր էր Բերլինի վեհաժողովին: Մի մարդ, որ այդպիսով ստուգութիւնը դարձրել է իր հրապարակային դաւանանքը, profession de foi, նա այլ ևս բարոյապէս մեռած է: Այդպիսի մարդու իսկական տեղն այն է, ուր ինքը Չերազն գտնուում է այսօր: Այն է՝ փողոցում, որտեղ գարշահոտ անկիւններում նա հաւաքում է ամեն կեղտեր իր փողոցային գատարկ թերթը լքցնելու համար: Կատաղած իր անկարութեան ու բարոյական անկման վրայ՝ նա իր հրապարակային դաւանանքն արտայայտում է իրան յատուկ ձևով — փրփրած բերանի վայրահաջութեամբ մէկի դէմ և ջեղւիտական քծնութեամբ միւսի առաջ: Երեւի այդ էլ պօլսական «ղիւսնագէտների» խորագէտ մեթօդն է: Այսպէս, մի կողմից ամիսներից ի վեր, տեղի անտեղի, նա յարձակւում է Վիեննայի «Հանդէս Ամսօրիայի» վրայ, որը մի թեթեւ հարածով մերկացրել է Չերազնի տղա-գիտութիւնը և հացկատակ «հայրենասիրութիւնը», և միւս կողմից քծնում է Վենետիկի «Բազմավէպի» առաջ, ճիգ թափելով այդ երկու միաբանութիւններն իրարու դէմ՝ լարել ու: Նա յարձակւում է Թիֆլիսի «Արձագանքի» աշխատակից Ս. Քամալեանցի դէմ, որովհետ-

տե նա Չերազն պէս թշուրի գոյութեան և «երեսունամեայ գործունէութեան» (ճշմարիտ embarrass de richesse) մասին յիշատակութիւնն իսկ անարժան է համարել իր մի յօդւածում հայ ժողովրդային բերանացի գրականութեան հաւաքման մասին: Հոստական ծիծաղաշարժ ինքնապաշտութեան կատարելալ գլուխ գործոց է Չերազն գրած սիւնեակը քամալեանցի դէմ: Եւ Չերազն գանգատուում է, որ իրան մարդու տեղ դրնող չը կայ, որ ոչ ոք չէ ուզում ընդունել, թէ նա գիտնական է իր տառն և երեք տարեկան հասակից սկսած, այո, տասնեակներ, որպէս և ազգային գործիչ է տասնեակներ տարեկան հասակից, որպէս և դիւանագիտական հոստած բազմիկ աշխարհը դարձեալ տասնեակներ տարեկան հասակից, նոյնպէս նաև գրող, ուսուցիչ, դանբանական ճառախօս (գործիչներին թաղել նա առհասարակ շատ է սիրում) պատգամաւոր Բերլինի վեհաժողովին, Բիսմարկի, Գօրչակովի և աշխարհիս ամեն մեծ մարդկանց հետ միաթիւն թիւրքի հանգով վիշաւ ուտել — բոլորը միշտ սկսած է տասնեակներ տարեկան հասակից, այդ սատանայական թւից... Ողորմելի, դժբախտ տասնեակներ տարեկան երեխայ, որ այդպիսով զուրկ ես մնացել մանկական հասակի մաքրութիւնից ու անկեղծութիւնից իսկ... Բայց պօլսական այդ Տարտիֆը, որ մեծամոլութեան ակտով է հիւանդ, մանաւանդ կատաղած է «Հնչակի» և սրա խմբագրի դէմ, որոնք մի մեծ, անգարմանելի մեղք են գործել, այնքան «հրէշ» գտնելով, որ Չերազն պէս մի մեծ (շատ մեծ — այդ բանն ինքն ամենից լաւ գիտէ և միակ գիտցողն է տրդէն) մարդու և նրա նմանների գիմակներն են պատառել և մերկացրել նրանց անձուքի ու ապականած բարոյականը և մտաւոր սնանկութիւնը: Եւ Չերազն «Հնչակի» աջուր և «Հնչակից» վրէժ առնելու համար ընկերակցել է հիմա այն մարդկանց հետ, որոնց նոյն իսկ իր թերթում մատնիչ ու դաւաճան է հռչակել ժամանակին: Նա իր ուրախութեան սահմանը չը գիտէ, և դարձած նազըմա-արփիարական խմբակի alter ego (հայերէն պարզ ոճով դա նշանակում է՝ պոչը), նա հիմա նրա ձագուկների թւեքի տակ աժան ձմերուկներ է դնում, գովում, քաջութելում նրանց, սպասելով, որ հայերի մէջ գէթ այդ խմբակի մարդիկը նրան հռչակեն մեծ մարդ: Պարզ բան է, asinus asinum fricat (էշը էշին է շըփում):

Եւ իբրեւ պարագլուխ կանգնած հիմա այդ անսուրբ խմբակի, Չերազն քաւոր ամեն մի տխմարի կամ հացկատակի կամ սրիկայի զրպարտութիւններն ու ցանցառաքանութիւնները սքըւթեամբ, մարգարիտների պէտ հատիկ-հատիկ հաւաքում է իբրեւ «սարսափելի մեղադրութիւն», «զարհուրելի յայտնութիւն» (ինչո՞ւ էք այդքան պստիկ խօսքով բաւականանում)՝ Նազարբէկի դէմ: «Հնչակի» տպարանից վնասուել է գրաշարներից մի 18 տարեկան փչացած տղայ, որն անվայել տխմարութիւն է արել — և ահա Չերազն փող է փչում «սօցիալ-դեմոկրատ Նազարբէկի դէմ սարսափելի» մեղադրութիւն, այն ստուգութեան տակ, թէ իբր խեղճ գրաշարն անվճար է մնացել (բանի որ Չերազն այդքան հետքեր է «Հնչակի» գրաշարների վարձքերը տալու ու չը տալու մասին, մենք կուզենայինք սիրով նրան յանձնել դրա հաշւապահութիւնը, չը նայած որ բնաւ վստահութիւն չունենք վրան): Տօնապետանների պէս յայտնի սրիկանների դաւաճանական

ու ստոր թղթամրոտումներն անմիջապես արձագանք գտան իրանց արժանաւոր տեղը, այսինքն սուտ ու կեղծ պատգամաւորի խելքի աղքատ թերթում — և ահա Չերազը պոռում է՝ զարհուրելի՛ յայտնութիւններ Նազարբէկի հրէշաւորութեան մասին: Եւ դաւաճանների այդ նշանաւոր փառաբանն այսօր աչքը տնկել է «Հին-չալկի» խմբագրատան ամեն ծակերի վրայ, պապակէլով իմանալ, թէ արդեօք այնտեղ ինչ նոր բան կայ, որ իր թերթի համար նիւթ չինէ: Նոր կարեւոր ազդ Չերազին et tutti quanti հեռեւեալն է, որ թէ «l'Arménie»-ի և թէ զանազան «շրջաբերականների» համար արժանաւոր նիւթ է (եթէ արդէն նրանք չեն տպագրել այդ լուրը)։ — Անցեալ օրը Նազարբէկն իր տունը մտնելիս՝ մի փողոցային շուն հաջեց վրան...

Բայց, պարոն մեծ մարդ, ինչու ձեր թերթում չը զետեղեցիք տեղեկութիւն այն դժբախտ արկածի մասին, որ անցեալ դեկտեմբերի վերջերն ունեցաւ ձեր բարեկամ ու պաշտպանած Տօնապետեանը և որի մասին դուք ունէք յատուկ տեղեկութիւններ: Զե՞ որ Տօնապետեանը ձեզ պէս մեծ մարդու մեծ արդանեակ է և, այ, այ, այ, ինչպէս կարելի է, որ գէթ հայոց ազգային պատմութեան համար իբրեւ նիւթ չէք զետեղում ձեր թերթում լուրեր այն ուժգին ապտակներին մասին, որ երես առ երես եղած պահին, Հրաչեայ-Մարալից ստացաւ ձեր բարեկամին իր արիկայական զրպարտութիւնների համար: Ինչպէս չէք գրում նաև այն մասին, թէ որպէս Հրաչեան խոսքերով էլ անպատեւելով, միաժամանակ մենամարտի հրաւիրեց այն գաճաճ վախկոտին, եթէ նա աղնութեան գէթ մի նըշոյլ դեռ ունի: Ինչու ձեր փայտէ գրչով չը նկարագրեցիք ձեր թերթում, թէ ինչպէս Հրաչեայի ապտակների տակ ձեր արժանաւոր արբանեակը ողորմելի կերպով կծկեցաւ, լացեց և ապա առանց մի խօսք ասելու՝ ագին կշկռեց ու փախաւ... Ինչու՞ ձեր քաջութիւնից նրան էլ մի մաս չը տուիք, որ մենամարտի հրաւերից չը փախչէր և մինչև հիմա էլ շինծու մեռած չը ձևանար, ինչպէս խորամանկաբար մուկն է անում կատիկ թաթի տակ: Ինչ հրաշալի նիւթ «l'Arménie»-ի համար ապացուցելու Նազարբէկի «հրէշաւորութիւնը»: Բայց դեռ այդ բոլորը չէ: Չերազը պարտաւոր է անմահացնելու իր արբանեակների անունը, ինչպէս անմահացրել է իր սեփականը: Օրինակ, ամենապարզ gallant-ի զգացումը նրանց պահանջում է «l'Arménie»-ում շնորհակալութիւն յայտնել իր Տօնապետեանին, որ սա աղողել է «Հինչալկի» վերոյիշած գրաշարին իր ճանկն առնել, այնուհետև այդ տըղային իր վարպետի՝ Չերազի ճանկը գցելու համար, և այդպիսով «Հինչալկի» ներկայ համարը ժամանակից ուշ լոյս տեսնելու պատճառ լինելով: Պէտք է հրապարակապէս շնորհակալութիւն յայտնէր իր արբանեակին, որ աջողել է «Հինչալկի» տպարանից գողանալ տալ թերթիս անցեալ տարւոյ Nr 10-ի օրինակներից պահեստի մնացած կապոցը: Մեր ընթերցողները յիշում են, որ այդ համարում զեռեղած կար մի յօդուած մերկացնող Չերազա-տօնապետական զղելի աչքակապութիւններն ու նրանց հասարակական ձեռնածուլութիւնները: Անմահացէք, անմահացէք, պարոն մեծ մարդ, բայց մի՛ մոռանաք անմահացնել և ձեր արբանեակներին...

Ամեն ստոր խնորհներն ու զրպարտութիւններ գործ դնել, մինչև իսկ գողանալ տալ «Հինչալկի» համարներ-

ըր, բոլոր ձիգ թափելով մի կերպ վերջ տալ նրա հրատարակմանը — արդարև միմիայն առկթանական օտարականութեան աջնտներին յատուկ գործ է: Եւ այսօր գտնեցան հայեր, յանձին Չերազի արբանեակ Տօնապետեանների, որոնք այդ անամօթ ու ստոր սխրագործութիւնների հերոսներ դարձան թիւրք օտարականական աջնտներից աւելի ճարպիկ յայտնելով: Թիւրքական նենգ ու անբարոյական բարբերի կրթութիւնը իւրացրած վատեր, որոնք իրանց ռիւր յագեցնելու համար... պատրաստ են անգամ իրանց թղթատել տալ: Այդ հերոսութիւնների համար այդպիսիներին իրանց վեհապետ Մեծ Մարգասպանն, անտարակոյս, սիրով չըքանշաններ կը պարգևէ, և արփիարականութեան ճագուկ Տօնապետեանին միայն մնում է յատուկ գիմումներ անել սուլթանին «մի հեղինակաւոր միջնորդի» միջոցով: Դեռ տարիներ իսկ առաջ նշանաւոր Գրիգոր Արծրունու ծաղրած Չերազից զատ՝ հրապարակում այլ ևս ուրիշ «հեղինակաւոր» մարդ չը կայ այդ գործը գըլուկ բերելու համար. մանաւանդ որ նա արդէն փորձառութիւն ունի ամեն տեսակ շողորորութեան ճանապարհներով շքանշաններ խնդրելու իրա համար, ինչպէս օրինակ, ի միջի այլոց, այդպիսի ձիգեր էլ թափեց պարսկական կառավարութիւնից ստանալու, թէև, պաշտ, անաղղ: Եւ այսօր արդէն մենք մնացել ենք զարմացած, թէ ինչու սուլթանն ուշանում է օսմանեան մի շքանշանով զարդարելու այդ փառաւոր օսմանցի հայրենասէրի փառաւոր կուրծքը...

*

*

*

Վերջին խօսք: Ամեն բան իր սահմանն ունի, ի հարկէ, և մինչև իսկ պօլսական Տարափի անսահման լըբութիւնն էլ պէտք ունենայ իր սահմանը, որ վերջապէս մենք կորոշենք նրան, եթէ ինքն իր բարի կամվով չէ ուզում այդ անել: Այդ աճապարարն իրա համար աղւեսական բնութիւն է շինել զանազան տեղերի անւան տակ կեղծ ու անստորագրի թղթակցութիւններ թխել, կոտրած գրչի անձոնի գծերով իր նիւթասիրական աղտերը զրպարտութեամբ թափելով մեր դէմ: Միւս կողմից նա իր թերթում զետեղում է, թէ իբր Նազարբէկի «հրամանով» է եղել Կերեկցեանի, Շիրաւեանի, Թումայեանի, մի կիլիկեցի բժշկի (ինչու անունը չէք տալիս) և մի շարք ու այլն, և այլն՝ հայրենասէրների սպանումը: Չերազն ինքը քաջ դիտէ, որ այդ հրէշաւոր առասպելներն իր թերթում հիւստիւրելով, ինքը բացարձակապէս անամօթ ստախոսութիւն է անում: Եւ այդ բոլոր ստախոսութիւնների համար իր թերթն ու իրան պատասխանատու նկատելով, մենք այժմ առաջադրում ենք այդ աճապարարին ապացուցել, որ ինքը ստախոս չէ: Եթէ այդ ապացուցները մեջտեղ չը բերաւ — այն ժամանակ մենք նրան կանուանենք զըրպարտիչ, ստորաբարձ, վատ: Եւ ապա, արդէն ապացուցած լինելով թէ որտեղ են դրամակուլները, մենք կապացուցանենք նաև, թէ վերոյիշած անձերի սպանիչները Նազարբէկի ռիւրիմ թշնամիներ են և նրանցից ոմանք այսօր գտնուում են նոյն իրան Չերազի հովանաւորութեան տակ և իրանց միասակար գործուէութեան շարունակման մէջ քաջալերւած են նոյն իրա՝ Չերազի կողմից: Կրկնում ենք, մենք առաջադրում ենք այդ Տարափին տալ մեզ իր պարզ ու որոշ ապացուցները: Եւ թող հիմակաւնից իմանայ, որ աւելի լաւ կանի, եթէ լուի, քան վայրահաջութիւններով, աչ-

քակապութիւններով, պօլսական սեթեթեթերով ագի
խաղացնէ, շիտակ խօսքից խոյս տալով: Այդպիսի հտպի-
տութիւնները մենք յետ կը շարունակէր երեսին: Սրա-
նով տալիս ենք մեր ազդարարութիւնը, և եթէ դրա-
նից յետոյ էլ շերտըն իր չափը չիմանայ, այն ժա-
մանակ մենք ստիպւած կը լինենք դիմելու այլ, վերջ-
նական միջոցի: Vulnerant omnes, ultima necat.

* * *

Չերազնի հիմաւայ կատաղի ու անամօթ ընթացքը
„Հնչակի“ դէմ չէ կարելի բացատրել միմիայն նրա ա-
սիական ոխով ու նենգամտութեամբ, որ այդ պարոն
mediocrité par excellence-ը ստացել է Կ. Պօլսում
թիւրքական կրթութեան հետ միասին: Հայութեան
ներկայ ընդհանուր բեկցիւթի ու մտքերի շփոթու-
թեան միջոցին նրա այդ ընթացքը ջուր պղտորելու ճիգ
է, որպէսզի յեղափոխական գաղափարն ու գործունէու-
թիւնը վերանայ, որի առաջ նա ինքն սակայն մէկ անըն-
մարելի թղուկ է: Նա դրանով նաեւ իրա համար ճա-
նապարհ է բանում դէպի իր կարօտած Ոսկեղջիւրը:
Դրան իբրեւ ապացոյց „Հնչակի“ անցեալ տարւայ դո-
ղացւած № 10-ում մենք բերել էինք հատուածներ՝
քաղւած „l'Armenie“-ից: Եւ այսօր էլ դարձեալ բե-
րենք նոր, թարմ ապացոյցներ նոյն թերթից: Չերազնի այդ
փալախի ներկայ տարւայ յունարի համարում հաղորդ-
ւում է արդէն յայտնի տեղեկութիւնները սուլթանի
կողմից Պէրայի միւթէսարըֆ Էնիէր բէյի գործակա-
լին իբրեւ յատուկ պատուիրակ, Եւրօպա ղրկելու մա-
սին: „l'Armenie“ իր կողմից աւելացնում է, որ այդ
պատուիրակը „Գէորգ Էֆէնդի Պնւլլիւկեան մի երի-
տասարդ փաստաբան է և պատկանում է Օրդուի պատ-
ւաւոր մի գերգաստան:“ Այդ պատուաւոր գերգաս-
տան պատուաւոր դաւակը յայտնի է որ յատուկ պաշ-
տօն է ստանձնել հայ յեղափոխականների մէջ երկ-
պառակութիւն սերմանելու և նրանց կազմակերպութիւն-
ները քանդելու, մի բան—որ փորձով գիտենք—մեծ
հաճոյք կը պատճառէ Չերազնի: Եւ „l'Armenie“-ն
աւելացնում է հետեւեալ բնորոշ տողերը.—„Մի քանի
ազգային քարծր անձնաւորութիւններ (իմա Նուրեան և Շօ.)
ինձ հաւատացնում են, որ Բ. Դուռը ոչինչ վաստակած չի
մինև (օճօ, ինչ հոգս. և ուրեմն թող հայերն իրանք
Բ. Դրան շահերի խորհրդատուներ կանգնեն՝ հայոց տու-
նը քանդելու) ուղարկելով մի պարզ պատուիրակ: Նրանք
(այդ ազգայինները) կարծում են, որ Կ. Պօլսի հայութիւնը
(ուզում է ասել Բ. Դուռը, քանի որ խօսքը Բ. Դրան
շահերի մասին է և ոչ թէ հայութեան) պէտք է ուղար-
կէ իբրեւ պատգամաւոր մի քարծր անձնաւորութիւն (օրինակ,
Կ. Պօլսում գտնւած հայերից Չերազնի պէս մէկը կամ
նոյն իսկ մի փաշա... A la rigueur, նոյն իրան Չերազնի
կարելի է այդ պատգամաւորի պաշտօնը տալ. Չերազնից
աւելի հեղինակաւոր մարդ միթէ կայ հայութեան մէջ,
և չէ՞ որ ամեն պատգամաւորական պաշտօն նրա ժա-
ռանգական իրաւունքն է. օրինակ, շինծու պատգամա-
ւոր Բերլինի վեհաժողովին, պատգամաւոր դուքս Տէյ-
կի մօտ, ինքնաստեղծ պատգամաւոր թէեւ, բայց իրան
ներկայացրեց ազգի կողմից ղրկւած և այլն, և այլն)՝
որն ունենայ քաւական հեղինակութիւն միջնորդ լինելու Կ. Պօլսի
հայութեան եւ օսմանեան կառավարութեան միջև (այս նա-
խադասութիւնը բոլորովին աչքակապութիւն է. միջնորդ
կարելի է լինել երկու հակառակ մարմինների միջև.
Կ. Պօլսի այդ հայութիւնն, այսինքն չորբաջիներ
ու մեծ ազգայիններ, ինչ հակառակութիւն է ցոյց տալ
իր օսմանեան կառավարութեան դէմ կամ ուրիշ ինչ

կապ է ունեցել ազգային ազատագրական շարժման
հետ, բացի թշնամութիւնից) եւ որ այդ պատգամաւորն
իր առաջին այցելութիւնը պէտք է տայ Լօնդօնին (դէ քիչ
շուտ ասացէք այդ, էլի. էլ ինչ էք սար ու ձոր ընկել),
որը զիւստօր կենտրոնն է հայկական քարնորոգումների կու-
սակցութեան (իմա Չերազնի), այդ կուսակցութիւնը (որի
անգոյ գոյութեան մասին հայերն առաջին անգամ են
լսում այսօր) աւելի (օճօ) ազդեցութիւն ունենալով թիւր-
քայի հայերի վրայ (ինչ՞ թիւրքահայեր, ամբարտաւան
հացկատակներն իրանց համարում են ձեր իշխաններ)
քան իր եւ յեղափոխական կուսակցութիւնը:“

Ահա թէ պղտոր ջուրը Տարախներին ինչ ե-
րազներ է տալիս և որպիսի փափուկ ու հարուստ ճա-
նապարհ է բանում նրանց առաջ դէպի բօֆօրական
դրախտը: Դէ էլ ինչ էք երկարացնում, տնայնիկներ.
ամենքն էլ ձեզ լաւ են ճանաչում. այլ ևս աչքակա-
պութեան տեղի չը կայ. ինչ պէտք կայ պատգա-
մաւորներ աղաչելու ձեռնապահութիւններին դիմել. դրա-
նով հիմա այլ ևս ոչ որին չէք խաբիլ: Բուրիկօնն
արդէն անցել էք և պօլսական դրախտի փորձութեան
հրապոյրին դիմադրելն այլ ևս չինծու ձեռնապահութիւններ
են ձեր կողմից: Գնացէք, ձեր մուրափն հասէք, օս-
մանցի հայրենասէր: Սուլթանի ոտքը հրապարա-
կապէս լզող ձեր առաջին բարեկամ ֆէշեաններ (ո-
րոնց հետ դուք աշխատակցում էք հայատառ սուլթա-
նական թերթ „Բիւզանդիօն“-ում) այնտեղ անհամբեր
կարօտ են մնացել ձեր հեղինակաւոր աջակցութեան:

Ա.

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Կրէտական խնդիրը նորից ստանում է քաղաքա-
կան խիստ բնաւորութիւն: Կռիւններ՝ ընդհարումներ՝ ա-
պստամբների և թիւրք զինւորների կամ բաշիբօզուգ-
ների մէջ՝ վերստին երևան են գալիս ուժգին կեր-
պով և կղզու կացութիւնը ծանրացնում:

Կիսամոռւմ ապստամբները յարձակում գործեցին
թիւրք զորքերի վրայ: Վերջիններս պատասխանեցին հը-
րացանաձգութեամբ և կռիւը տևեց ամբողջ մի ժամ:
Նոյնպէս բազմաթիւ ապստամբներ, կարճ ժամանակի
ընթացքում համախմբելով, յարձակեցին ֆինիքիա
գիւղի վրայ, ուր հաստատւած է թիւրքական բանակը:
Տեղական բնակիչները միացել էին ապստամբների հետ:
Կռիւը տևեց մինչև քէս օր խիստ հրացանաձգութեամբ.
ապստամբները յետ քաշեցին և մի վիրաւորւած փո-
խադրեց Գանտիա:

Վալիպի մօտերը մահաւորականները մի յարձակում
գործեցին ապստամբների դիրքի վրայ: Գանտիայի մէջ
մի խումբ մահաւորական ապստամբներ արգելեցին
թիւրք զինւորների կողմից և նրանցից 20 հոգի ձեր-
բակալելով տարին անգլ. շոգենուր: Այդ օրը թիւր-
քական և անգլ. չուր մարտանաւի զինւորները միա-
սին հսկեցին քաղաքը: Մի մուլա շուրջը հաւաքելով
մօտ 2,000 բաշիբօզուգ, կառավարութիւնից պահան-
ջեց ձերբակալւածների արձակումը: Ագիտները բա-
շիբօզուգների չորս պարագլուխներէն առժամապէս բան-
տարկեցին Սքինալօնիայի բերդում:

Ֆինիքիայի մօտը բրիտանականները յարձակեցին
թիւրքական զինւորների մի շղթայի վրայ: Զինւորնե-
րը նահանջեցին դէպի քաղաք, այնտեղ թողնելով եր-

կու սպանւած և երեք Վիրաւոր: Բայց յետոյ նոր օգնութիւն ստանալով վերադարձան և նորից գրաւեցին իրենց դիրքերը:

Ռուսիայի նախաձեռնութեամբ Անգլիա, Ֆրանսիա և Ռուսիա իրանց մէջ համաձայնութիւն են կայացրել, որ առանց սուլթանի հաւանութեան կամ մինչև իսկ միւս ընդդիմացող պետութիւնների, իշխան Գիօր գին պիտի հաստատեն իրենցի ընդհանուր կառավարիչ: Այս առթիւ արդէն մի ծանուցագիր է առաջարկել իշխան Գիօրգին՝ յայտնելով, որ վերջինս նշանակւած պահուն իրան պիտի դնի պետութիւնների պաշտպանութեան ներքև: Հաւանական է էդհէմ փաշայի գործառնութիւնները, թեսալիայում, կապ ունենայ խնդրի հետ: Էդհէմը, վերջերս, Պոլսից հասած սպաների օգնութեամբ, չորս նոր ամրոցներ է կառուցանում Գոմօկոյի և Լամիայի մէջ: Էդհէմը 1,200, 000 Ֆրանկի վճարագիր ստացաւ պալատից:

Ալբանական կենտրոնական կոմիտէտը, որը գտնւում է Բուքարէշտի մէջ, մի պատգամաւորութիւն է ուղարկել Բէլգրադ, որով նպատակ ունի ալբանացիների և սերբիացիների մէջ հաստատել միաբանութիւն՝ պաշտպանելու համար իրանց հասարակական շահերը ընդդէմ թիւրքական կառավարութեան:

Բուքարէշտում «Սկիպէտոր» ալբաներէն լրագրի, իբրև նոյն կոմիտէտի օրգան, երևան գալուց յետոյ, Ալբանիացիները սուլթանից պահանջեցին ինքնօրինութիւն Սկիտարի, Ֆոսօփօ, Մոնաստիր և Գանիմա վիլայէթներին համար, որպէս նաև ալբաներէն լեզուի պաշտօնական մուտքը եկեղեցիներում ու դպրոցներում և ընդհանուր ներդրութիւն բոլոր ալբանացի արքայազնների կամ բանտարկւածների համար:

Վ. Պոլսի աւստրիական և ամերիկեան դեսպանները միասին գումար գնալով՝ փոխարինութիւն պահանջեցին այն անիրաւութիւնների՝ որ գործադրւած են Հայկաի իշխանութեան կողմից ամերիկեան տեղական հոնսիւլի վրայ, որը աւստրիական բաղաբացի է:

Սուլթանն այլ ևս երկիւղ չէ կրում հայ մասսայից, բայց նրանց պատճառած անցեալ սորսափը դեռ կենդանի է նրա սրտում: Նորանոր ձերբակալութիւններ են լինում Մէրսինում և Ատանայում: Վերջին բաղաբում 25 հայերի դատաւարութիւնը վերջանալով, տեղական դատարանի կողմից նրանք դատապարտեցան մահաւան պատժի:

Սուլթանի երբեմն շատ սիրելի և հաւատարիմ իզդէդ բէյը, որ քիչ ժամանակ առաջ արտաքսեց պալատից, յանկարծ ձերբակալեց բրէական յանցանքով: Նրա որդին, որը վաղուց ամբաստանել էր իբրև անգամ «Ժէօն թիւրքերի» կուսակցութեան, աջողել է խուսափել արտասահման: Իբր թէ վերջինը վերջերս է շատ կարեւոր դոկումէտներ պետական գաղտնիքներ պարունակող:

ԿՈՒՐԱՆ.

Կուբացի մի սպայ կղզու գրութիւն մասին հաղորդում է հետևեալը.—

Պատերազմական կացութիւնը Կուբայում չունի ու և տարբերութիւն: Կուբացիները բաւական զօրաւոր չեն որպէս զի կարող լինեն ծովը թափել սպանիական զօրքերին: Գրա փոխարէն Սպանիան ևս չունի այնքան ոյժ:

Նուաձեւու համար մեր զօրագնդերը: Առ այժմ սպանիական զինւորները համախմբւած են անառիկ գիրքերում: Նրանք այնտեղ պահպանւում են, ճշմարիտ է, բայց չեն համարձակում, պարտութեան երկիւղից, առաջանալ մինչև գիւղերը, և ոչ էլ պատերազմի դաշտը:

Գալով մեր զինւորներին, նրանք նոյնպէս ոգեւորւած են այժմ, ինչպէս կուէի սկզբում: Մենք ունենք լաւագոյն սպաներ, քան թէ սկիզբը, և այդ հասկանալի է: Թշնամութիւնների բացման ժամանակ մեր բարեկամներից շատեր, որոնք մտերիմ էին մեզ հետ, երբեք չէին հաւատում այսպիսի լուրջ ընդդիմութեան հնարաւորութեան: Իսկ յետոյ նրանք հասկացան, որ մենք ունէինք զօրաւոր բաղդ աջողելու. այնուհետև փոխեցին իրանց հանդիսատեսի դերը՝ գործօնի: Ահա թէ ինչպէս, հակառակ բոլորի, աւելանում է մեր բանակի թիւը:

Միւս կողմից՝ խաղաղ կիւբացիները, երկրագործները, շնորհով սպանիական ջանքերի, համախմբւած են մեծ կենտրոններում, կարեւոր քաղաքներում: Նրանք արգիլւած են այնտեղ առանց սնունդի, առանց դրամի, առանց բնակարանի: Աղէտալի համաճարակներ չեն ուշացել յայտնելու. և նրանք, որոնց ինայել է հիւանդութիւնը, մեռնում են անօթութեան տանջանքներից: Երեսուն և հինգ շաբաթից ի վեր այդպիսի հանգամանքներից առաջացած մահերի թիւը անցնում է 400,000-ը: Ի հարկէ դուք հասկանում էք մահը մահի համար. մեր գիւղացիները նախամեծար են համարում նոյնը պատերազմի դաշտում: Եւ լուրերը մեզ հասնում են ամեն օր:

Հին զինւորները, որոնք եղել են հէնց կռիւների սկզբից, ստացած են կրթութիւն, տեղեւորութիւն, պատերազմական վարժութիւն և մանաւանդ կարգապահութիւն, որ բոլորովին պակասում էր սկզբում:

Մեզ չի պակասում ոչ զէնք, ոչ ռազմավարք, ոչ դրամ և մենք կարող ենք, առանց նեղութեան, այն բոլոր միջոցներով, որ պատրաստի ունենք այսօր, դիմագրաւել սպանիացիներին առնւազն ամբողջ մի տարի: 200,000 մարդկանցից, որոնց Սպանիան նետած է մեր դժբաղդ կղզին, հազիւ 60,000 հոգի է մնացել այժմ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏ.

Սրանով յայտարարում ենք, որ սկսած յաջորդ համարից «Հնչակ» այլ ևս չի ուղարկւել այն ամենքին, որոնք չեն վերանորոգել իրանց հասցէները:

Յայտարարում ենք նաեւ, որ այն նամակները, որոնք չեն կրում նամակադրոշմ եւ կամ կրում են ոչ իրանց արժէքի համաձայն, խմբագրութեան կողմից չեն ընդունւել:

Մամուլի տակ է

«Լեռնորդիքը կամ Գէթուին»

գիրքը,

Հեղ. Հրաչեայ-Մարալ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush London W. [Angleterre].

«Հնչակ»-ի ՏՊԱՐԱՆ

1 ՕԿՏՈՆ.